թեան ոչ միայն կարևորութիւն տալու են նաև մեր Ազգային Պատուիրակութիւնն և Հասարակապետութիւնը, այլ և ուշի ուշով հսկելու, վասն զի ասով միայն թուրքի նենգաւոր հաշիւները յօդը պիտի ցնդին և ափիբերան պիտի լինին Հայոց անկախութեան հակառակորդները։

Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵՌԱԳՈՒՆԵԱՆ ԳՐՈՇԱԿԻՆ

(Ժողովրդական քայլերգիկ)

Դրոշակներու էն գեղանին,
Էն գեղանին դրոշակներու,
Եռագունեանն է ծիրանին,
Խրախոյս կուուի և յաղթելու։
Քեզ կը սիրենք, Եռագունեա՜ն,
Երփներանգ ճոխ և անուշակ.
Իմաստն ես դուն ԱԶԱՏՈՒԹԵԱՆ,
ՀԱՒՍԱՐ ԿԵԱՆՔԻ նշան գուշակ,
ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ կապ հաստատուր...
Քեզ կը սիրենք, Եռագունեա՜ն,
Ո՛վ դրոշակ ձայն քաղցրալուր՝
Բոց և Ոգի Ազատութեան...
Ազատութիւն, Ազատութիւն,
Դուն մեզ իշխէ, դուն միայն դուն,
Հաւասարութիւն՝
Եղբայրութիւն՝
Ազատութիւն,
Ո՛վ Եռագոյն՝
Իշխէ մեզ դուն,
Դուն միայն դուն,
Ազատութիւն–Հաւասարութիւն–Եղբայրութիւն,
Ո՛վ նիշ սիրուն, դրոշակ խօսուն, պերճ Եռագոյն,
Իշխէ մեզ դուն,
Իշխէ մեզ դուն։

Հ. Գ. Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ ԸՍՏ Շ. ՀԱՅԿԱԶ

(Տես Բազմավէպ էջ 23–1919)

Բ. Փարաւոնք, Մովսեսի Ժամանակները.

Ինչպէս որ Յովսեփայ ժամանակի Փարաւոնը կամ Փարաւոնները ստուգեցինք իրենց ներքին նշաններով, այսպէս ալ Մովսիսի ժամանակակից Փարաւոնները ջանանք ստուգել, թէև արձանագրութիւնք նշանակած չեն այն մեծ դէպքը՝ որ ժողովուրդ մ՝ ամբողջ Եգիպտոսէն կը հեռանայ։ Սակայն թէ՛ Մովսիսի ծննդեան ժամանակի Փարաւոնը, և թէ՛ անոր Եգիպտոսէն Իսրայելացիները հանելու ժամանակի Փարաւոնը ունին որոշ նշաններ՝ որ յայտնի կ՝ընեն թէ ասոնք իրարու հետ առնչութեան մէջ էին։

Ըսինք թէ բազմաստուածեանները կռիւ մղեցին ընդդէմ միաստուածեաններուն. և արդարև, այս այնքան յայտնի է որ մինչև իսկ Արեգացւոց մայրաքաղաքը կործանած են. վասն զի եթէ կործանած չըլլային բազմաստուածեանները Արեգ քաղաքը, ինչո՞ւ Փարաւոն՝ որ ըստ Ելից, «Ոչ գիտէր զՅովսէփ», շինել կուտայ դարձեալ Արեգ քաղաքը. «Եւ շինեցին քաղաքս ամուրս Փարաւոնի զՓիթոն, և զՌամեսէ, և զՈՆ՝ որ է Արեգ» Ելք. Ա. 11. բայց դիտելի է որ վերջի քաղաքն Ովն որ է Արեգ է ըստ Եօթանասնից. զի Եբրայականի և Վուլկատայի մէջ յիշատակութիւն չկայ, վասն զի ոչ թէ նոր քաղաք շինուեցաւ Ովն՝ որ է Արեգ իր առաջուան պէս պաշտման քաղաք, այլ այս անգամ նորոգուեցաւ և բերդաքաղաք շինուեցաւ ինչպէս Փիթոն և Ռամեսես։

Սակայն որքան միաստուածեանները կորուսին իրենց իշխանութիւնին, այսու հանդերձ անոնց կուսակիցները կ՝աճէին, Իսրայելացիները, այն աստիճանի՝ որ Եգիպտացիներէն, այսինքն բազմաստուածեաններէն աւելի կը զօրանային. «Եկաց

© National Library of Armenia

այլ թագաւոր որ ոչ գիտէր զՅովսէփ, և ասէ ցազգն իւր, ահա ազգ որդւոց Իսրայելի մեծ է զօրութեամբ և զօրանայ քան զմեզ, արդ եկայք հնարեսցուք ինչ նոցա, գուցէ բազմանայցեն և յորժամ դիպեսցի պատերազմ, յաւելուցուն և նոքա ի թշնամին և մարտուցեալ ընդ մեզ ելանիցեն յերկրէ աստի.» Ելք Ա. 8-10։

Ուստի Փարաւոն, կրնական խնդիրը քաղաքականի վերածելով, հալածանք սկսաւ հանել նախ գաղտ տէրութենէն ճանչցուած սնուցիչներու միջոցաւ. բայց կ'երևի թէ ասոնք ալ միաստուածեան կամ միաստուածեաններուն կուսակից էին, ուր ելից մէջ յայտնապէս կ'ըսէ սնուցիչներու համար, թէ «երկեան յԱստուծոյ», և ոչ թէ յաստուածոց. և որպէս զի չհնազանդին թագաւորի հրամանին՝ պատճառանք կը բերեն, ըսելով թէ Իսրայէլացիները նախ կը ծնանին և ապա զմեզ կը կանչեն։ «կոչեաց արքայն Եգիպտացւոց զծնուցիչսն և ասէ ցնոսա. Զի՞ է զի արարէք զիրսն զայնոսիկ, և ապրեցուցէք զարուս։ Եւ ասեն ծնուցիչքն ցՓարաւոն. Ոչ իբրև զկանայս Եգիպտացիս են Եբրայեցիքն. քանզի նախ ծնանին մինչ չեմտեալ առ նոսա մանկաբարձաց.» Ելք Ա. 18,19։

Այն ատեն Փարաւոն ուղղակի հալածանք հանեց, գետը նետել տալու արու մանուկները. և սակայն այս փորձս ալ անյաջող գնաց, վասն զի ինչպէս Մովսէսի իմաստութեանը մէջ կը կարդանք. «Զի խորհեալ էին նոքա զտղայս սրբոցն կոտորել և ընդ միոյ մանկանն ընկեցիկ եղեալ և ապրեալ, ի յանդիմանութիւն զնոսա զբազմութիւն որդւոցն սատակեցեր, և առ հասարակ կորուսեր ի ջուրս սաստիկս» Իմաստ. Սղ. ԺԸ 5։

Այս հալածանքին ժամանակն էր որ ծնաւ Մովսէս։ Թէ ինչպէս եղաւ որ նա առաջին եղաւ գետը ձգուելիքներէն, ձգուեցաւ ու ազատեցաւ, հոս է իմաստութիւնն Աստուծոյ, որ մարդուն չար խորհուրդը կ'եղծանէ իրեններովը։

Մովսէս, ի հրամանէ թագաւորին, պէտք էր գետ նետուիլ. թէ և պահուեցաւ երեք ամիս, սակայն հրաման թագաւորին սաստիկ էր, այլ ևս չէին կրնար խեղճ ծնողքը ծածկել։ Սոփոսուած մայրը, տղան գետը նետելու սիրտը առաջ չէր երթար, աղիքները կը գալարէին, խորհուրդ մը մտքին մէջ կը ծնանի զոր ի գործ կը դնէ իսկոյն։ Մինչ դեռ պրտեայ տապանն կը հիւսէր. ոհ, կ'ըսէ, արդեօք պիտի ըլլայ սա փրկութիւն մանկանս. և արտասուքն այտերէն վար՝ տապանը կը թանային. և աչքերը դէպ ի վեր բարձրացուց... հառաչեց... ապաւէն իմ դու ես։

Մինչ այն՝ որ կը նստի ի բարձունս չէր տեսներ չարչարողները, փակ էր ականջները տառապեալներուն աղօթքին՝ որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա, ոչ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց (Ղկ.)։ Բայց, ո՛չ, Բարձրեալն հոն մօտ էր, կը ժողվէր այն աղի կաթիլները՝ որ մոր մը այտերէն վար կը գլորէին՝ վրէժխնդրութիւն ընելու և ընկզմելու համար այն կաթիլներու մէջ նոյն ինքն բռնաւորները։ Արտասուաց կաթիլներով ողողուած տապանը շնչուեցաւ և կպրաձիւթով ծեփուեցաւ, որուն մէջ դրուեցաւ մանուկն և ձգուեցաւ գետին խաղերուն մէկուն մէջ ծառի մը շուքի տակ... Ոչ ոք այլ ևս կար հոն, մանուկը տապանին մէջ կը ճչէր։

Թումբ մը տիկնանց՝ ծառուղեաց մէջէն կը հասնէին հոն՝ ուր սովոր էր Փարաւոնի աղջիկը ամարային լոգանքներ ընելու. կը տեսնէ տապանն և մանուկ, որ անոր մէջ կուլար։ Հրաման թագաւորին իրեն ծանօթ էր։

«Թանդաղատեցաւ զնովաւ դուստրն Փարաւոնի և ասէ, ի մանկանց Եբրայեցւոց է դա» Ելք Բ 6։

Հակառակ հրամանի թագաւորին՝ հանել տուաւ զայն գետէն և մանկան անձին պաշտպանութեանը համար իրեն որդեգիր ըրաւ՝ ու յանձնեց ստնտուի մը որ իւր մայրն էր. և դուստրն Փարաւոնի ի յաւերժ նախատինք իր բռնաւոր եղբօր՝ կոչեց զայն Մոսկ կամ Մովսէս, որ ըսել է ջրէն ազատած, «ի ջրոյ անտի հանի զդա»։

Փարաւոնի հրամանն այլ ևս չէր զօրեր,

© National Library of Armenia

վասն զի Փարաւոնի դուստրն էր որ կ'իշխէր արքունեաց մէջ, Մինչ Սեսոստր պատերազմ կը մղէր դուրս, Փարաւոնի աղջիկը հալածանքը դադրեցուց։ Արդ, ինչպէս եղաւ որ Սեսոստր պատերազմի մէջ գտնուեցաւ իր դրացի ազգաց հետ։

Սիտի Ա., արձանագրութիւնները կը գրեն, թէ խոհեմութիւն համարեցաւ, վերջ տալ անսասոյգ յաղթութեանց։ Որոնտի դաշնադրութիւնն հաստատեց՝ Կիլիկիոյ, Լիւկայի, Միւսիոյ, Իղիոնի և Պեռասոսի՝ Փոքր Ասիոյ մեծագոյն մասին ժողովուրդներու հետ։ Այս հարկատու ազգերը կը կազմէին զօրեղ զինուորական դաշնակցութիւն մը։ Այս դաշնադրութիւնը կնքուեցաւ՝ Սիտիի ծերութեան ժամանակ։

Հռամսէս երկրորդ, որ ըստ ցունաց Սեսոստր մեծ, դաշնադրեան կնքման ներկայ էր, վասնզը գուշակեր էր։ Նկատի առնելով որ իր տէրութեանը մէջ կը սնուցանէր զօրաւոր ազգ մը Եբրայեցւոց, ուզեց նախ զանոնք ընկճել, որպէս զի չըլլայ թէ թշնամեաց կողմը բռնեն ինչպէս Ելբի գրոց մէջ նշանակուած է։ ուստի այս դիտաւորութեամբ երկրին ամրութեանը համար շինել տուաւ ամուր քաղաքներ՝ գերիներուն և Եբրայեցւոց։

Հռամսէս զինքը ներքսապէս այպէս ապահով տեսնելով, վարձուոր զինուորներով մեծ բանակի մը պատրաստութիւն սկսաւ՝ իր առաջին հինգ տարիներու մէջ։

Անդին, Փոքր Ասիոյ դաշնակից ժողովուրդը, առաջնորդութեամբ Քետիսարի, սկսաւ քալել Սեսոստրի իշխանութեան երկիրներուն վրայ։

Այս երկու խանդիճաղանճէ բաղկացեալ բանակներն իրարու հանդիպեցան ի Շաբտունա (Shabtouna), ասորական փոքր աւանին քով, կառուցուած կաղեսքի (Qadesch) հարաւ մտից կողմը։ Հռամսէս Բ. յանկարծակիի եկաւ՝ Բեդուինները սխալ տեղեկութեամբը, և թակարդի մէջ ինկաւ, ուսկից զարմանալի քաջութեամբ ազատեցաւ և յաղթութիւնն ինքն տարաւ։

Այս պատերազմը երկար տարիներ տևեց։ Որքան որ Քետիսար կամ Խիտիսար՝ դաշնակցած թագաւորը՝ խաղաղութիւն խընդրեց, բայց երկու յոգնած բանակները պէտք ունէին վերջնական խաղաղութեան, զոր կնքեցին Հռամսեսի քսանումէկերորդ տարին։ Հռամսէս ամուսնացաւ Քետիսարի աղջկանը հետ, և իբր աներ՝ Քիտիսար շրջեցաւ բոլոր Եգիպտոսի մէջ։

Այս կնքեալ խաղաղութիւնը տևեց քառասուն և վեց տարի, այն է թշնամութիւնը դադրեցէն մինչև Հռամսես Բ.ի մահը։ ապա յաջորդեց վրդովեալ ժամանակ մը, շուրջ 19 տարիներու՝ որ փութացուց անկումն ԺԹ Հարստութեան։

Այս արձանագրական պատմութիւնը բոլորովին համաձայն է Ելից պատմութեան մէջ գրուած Մովսիսի ժամանակին հետ։ Պատերազմի բռնուած Հռամսէս, սկսեալ իր հինգերորդ տարին մինչև քսանումէկերորդ տարին, գետը ձգուած Մովսէսը՝ Փարաւոն Սիտի Ա.ին դստեր գթութեանը արժանացած՝ կը մեծնար կը վարժէր ամենայն գիտութեամբ Եգիպտացւոց։ և երբ Հռամսէս Բ.ի մղած պատերազմները դադրեցան, նա ինքն Մովսէս 16 ամեայ կայտառ պատանի մ'էր, և նկատուած իբր արքունիքի զաւակներէն մին, վասն զի էր որդեգիր Հռամսեսի Բ.ի քրոջը։

Հռամսէս, որքան արտաքին թշնամիներէն ազատեցաւ, բայց երկրին ապահովութեանը համար միշտ սահմանագլուխ քաղաքները պէտք կը տեսնէր ամրացնելու։ Կրկին նպատակ ունէր արտաքին թշնամեաց յանկարծական յարձակմանց առաջքն առնելու համար, և երկրորդ, որ իրեն համար շատ մեծ կարևորութիւն ունէր, ներքին նկատած թշնամիին՝ Իսրայելացւոց ճնումն։ թէ և իր առաջին փորձերը աննպատակ մնացին. սակայն երրորդ փորձը ուզածէն շատ աւելի ապահով եղաւ, ամուր քաղաքներ շինելու ձեռնարկելով՝ ճնշման տակ կը դնէր, անով քաղաքական միտումներու կարող չէին ըլլար ձգտիլ։

Արդէն միաստուածեանց կրօնական ազդեցութիւնը ընջուած էր, և միայն Իսրայելացւոց շրջանակին մէջ մնացեր էր. և տիրող կրօնը Թեբայեցւոցն էր բազմաստուածեան։

© National Library of Armenia

Մովսէս կ'ածէր, միանգամայն կը սովրէր Եգիպտացւոց բոլոր գիտութիւնները. բայց բան մ'աւելի սովրեր էր իր ճշմարիտ մօրմէն, այն է, թէ ինքն չէր փարաւոնի դստեր զաւակը։ Կը տեսնէր Եբրայեցւոց կրծոները հազարապետներու ձեռքէն, որոնք քան զփարաւոն աւելի խիստ եղան և բռնաւոր, ինչպէս միշտ կը պատահի ամէն դարու և ամէն դասակարգութեան մէջ։ Այս ժամանակս Մովսէս քառասուն տարեկան էր, և Համմէս իր թագաւորութեանը քառասուն և վեցերորդ տարին կը տոնէր, և Մովսիսի մօրուն հաւանօրէն մեռած, և առաջի անգամն էր որ Մովսէս իսրայելացւոց մէջ կը մտնէր՝ մտէն անոնց հետ շփուելու և. կրելու համար։ Նա մեծ ծրագիր մը պատրաստեր էր, ազատելու իսրայելացիները այս գերութենէն. «Զմտաւ ածէր թէ իմասցին եղբարք նորա. զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա» Գործ. Ա. է 25։

Մտաւ Մովսէս իսրայելացւոց մէջ, օգնութեան հասնելու համար անոնց տառապանքներուն, արթնցնելու համար անոնց ոգւոյն մէջ ազատութեան սէրը, և վերջապէս խորտակելու գերութեան շղթաները։ Իր ծրագրին մէջ յաջողելու համար, նախ պէտք էր մի առ մի անհետ ընել այն բռնաւոր Եգիպտացի հազարապետները՝ զոր փարաւոն իր գործերուն վրայ դրած էր, և անոնց տեղ Եբրայեցիներ դնել տալ։

Օր մը տեսաւ որ Եգիպտացի մը կը ծեծէր Եբրայեցի մը. «խնդրեաց վրէժ զրկելոյն սպանեալ զեգիպտացին» ու անհետացուց աւազին մէջ։ Բայց Աստուծոյ ճամբան այս չէր։ Ընտրած էր Աստուած Մովսէսը՝ փրկիչ իսրայելի, և ոչ թէ Մովսիսի խորհած ճամբով։

Սպանեալին ընտանիքը փնտռեց իրեն մարդը, և ոչ ոք կասկած ունէր Մովսիսի վրայ, զի միայն զրկեալ Եբրայեցին գիտէր եղածը և անոր մերձաւորները։ Երկրորդ օրը Մովսէս ապահով կ'իջնէ իրենցներուն քովը, թերևս ուրիշ որս մ'ալ ընելու մտօք, և ահա այսօր տեսարանը կը փոխուի, երկու կռուողները Եբրայեցի էին, զանոնք խաղաղցնելու մտօք կը մօտենայ, և կը հարցնէ կռուին պատճառը։ Ճանչցաւ Եբրայեցին թէ նա հեզ իսրայելացի մըն է և ոչ թէ բռնաւոր Եգիպտացի, հաւանօրէն երեկուան զրկելոյն եղբայրը՝ կամ նոյն ինքն զրկեալն. որով ճանչցաւ շուտով թէ նոյն ինքն Մովսէսն էր որ երէկ իր հակառակորդ Եգիպտացին սպաննէր է. յոխորտաց անոր վրայ ու խիստ կերպով յանդիմանեց «Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վերայ մեր. եթէ սպանանել զիս կամիցիս որպէս երէկ սպաներ զեգիպտացին» Ելք. բ. 14։ Ահա ժողովուրդ մը որ ամէն Եգիպտական բռնութեանց, զրկանաց, յանդիմանութեանց գլուխ կը ծռէր, միայն հաշտարար խօսքի մը չդիմացաւ, ծածուկը՝ հրապարակեց։

Եղածը իմացաւ փարաւոն, և իսկոյն ըմբռնեց նպատակը. և ինչ բանէ որ կը վախէր՝ անոր ոգին իր տանը մէջ կը սնուցանէ եղեր։ Պատնելու հրամանը հանեց ու յանձնեց շատ մը անձինքներու որ զՄովսէս բռնեն ու իրեն բերեն, ու հրապարակաւ սպաննել տայ, իսրայելացւոց աչքերը վախցնէ, որպէս զի այլ ևս մէկ մը չյանդգնի այնպիսի ապստամբեցուցիչ փորձ մը մտածել։

Յայտնի վկայութիւն ունինք՝ թէ փարաւոն բազմաթիւ անձինք դրած էր դարանակալ Մովսիսի կենաց։

«Զի մեռան ամենայն արք որ խնդրեին զանձն քո»։ Ելք. դ. 19. և այս բացատրութիւնս ոչ թէ յետ մահուան Համմէս Բ.է կը դնէ. այլ յետ անկման ԺԹ Հարցութեան, ինչպէս պատմութեան կարգէն կը տեսնուի, այս բացատրութիւնս Ելից մէջ կը կարդանք Մովսիսի ութսունեռորդ տարին։ Որքան Համմէս զօրաւոր էր և ազդեցիկ, և դրաւ շատ մը մարդիկ որպէս զի բռնեն Մովսէսը. սակայն սա քան զանոնք աւելի ճարպիկ՝ փախաւ Մադիամու երկիրը՝ իր Եգիպտացի, և հոն մնաց քառասուն տարիներ։

Համմէս յետ կորսցնելու Մովսիսի հետքը, ապրեցաւ այլ ևս 21 տարիներ.

© National Library of Armenia

և թագաւորեց ընդ ամենն 67 տարի, անուն բարի թողլով Եգիպտացւոց պատմութեան մէջ. նախ իբր փառահեղ թագաւոր և երկրորդ իբր օրինակելի իշխան։ Բայց իր յաջորդները նսեմացուցին Եգիպտոսի փառքը։

Քիչ արձանագրութիւնք բնականաբար ցոյց կուտան, սակաւ և վրդովալից ժամանակի մը շրջանը, որ անցաւ յետ Հոմսեսի մահուան և տիրապետութեան Արիսուի։ Արդէն կողմնակի ժառանգները՝ արհամարհելով ժառանգութեան օրէնքը՝ կ'իշխէին Մենեփտահի և իր որդւոյն Սիտի երրորդի ժամանակները, և Եգիպտոս կը կառավարուէր առանց հեղինակութիւն ունեցող իշխաններով։ Դարձեալ այս ժամանակս Եգիպտոս տկարացեր էր՝ Մենեփտահի՝ պահակ զօրքերը ետ կանչելովը, ասով Եգիպտոս եղաւ տուն մը առանց դրան. և այս առեններս է որ ընկճեալ ազգաց նահանգապետներէն մին Արիսու, յարմար առթէն օգտուելով տապալեց ԺԹ Հարստութիւնը. ըստ արձանագրութեան. «Արիսու՝ որ եղաւ պետ նահանգներու իշխանաց մէջ, ստիպեց ամբողջ երկիրը իր դիմացը յարգանք մատուցանել». և սակայն իրմով ալ նոր հարստութիւն չսկսաւ, վասն զի իր բռնապետութիւնը իրմով վերջացաւ։ Ցիշատակութիւն չկայ թէ քանի տարի Արիսու տիրապետեց, սակայն Բ. Հոմսեսի մահուընէն մինչև անկումն Արիսուի 19 տարի ժամանակամիջոց մը կայ. վասն զի ըստ Ելից՝ Մովսիսի ուսմունքորդ տարին տեսիլ կը տեսնէ հրով վառեալ մորենի. ապա կը յաւելու «Եւ յետ աւուրցն բազմաց այնոցիկ վախճանեցաւ արքայն Եգիպտացւոց (Սիտի Գ.), և ասէ Տէր ցՄովսէս ի Մադիամ. Գնա և երթ յԵգիպտոս զի մեռան ամենայն արք որ խնդրէին զանձն քո»։ Արդ Մովսիսի 80ներորդ տարին կը մեռնի փարաւոն մը, և նոյն տարին ինքն Մովսէս կը մտնէ Եգիպտոս և իսկոյն անկից կը հանէ Իսրայելացիները։ Ասկից կը հետևի թէ Արիսու բռնաւոր և ոչ մէկ տարի իշխած է Եգիպտոսի վրայ։

Շարունակելի Հ. ԽՈՐԷՆ Ս.

ՔԱՋԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

Պ. Կ. Բասմաճեան ընդդիմաբանելով մեր Արտաւազդի մասին գրած և բերած փաստերուն, (որով մենք ուղղակի անհիմն կը համարէինք Հռոմայեցի պատմիչներու գրածներն, և անուղղակի կը հերքէինք Պարոն ընդդիմախօսի սխալ ենթադրութիւնները «վատասիրտ» կոչելու մեր թագաւորներու համակրելի դէմքերէն մէկն), հաճեր է կրկին անգամ հանդէս գալ նոյն իսկ « Բազմավէպ »ի Սեպտ. պրակի էջերուն՝ վերահաստատելու նոյն սխալ և թիւր դատողութիւնները, յենլով Պլուտարքոսի և Ստրաբոնի տարակուսական և վիճելի վկայութիւններու վրայ։ Ազգային պատմութեան շատ մը մութ կէտերէն մին լուսաբանելու սիրով՝ կրկին կը վերադառնանք նոյն նիւթին վրայ, հիմնական փաստերով, ըստ մեր տկար դատողութեան, հաւաստելու մեր թագաւորի քաջասրտութիւնն, և Անտոնիոսի վատասրտութիւնն զրպարտութեան մէջ։

Հռոմայեցի պատմիչներէն վկայութիւն քաղելու ժամանակ, չսխալելու համար, պէտք է Տակիտոսի գրածն աչքի առաջ ունենալ։ Նա ինքն իւր տարէգրութիւններն իսկ գրած պահուն՝ դիտել թէ իրմէ առաջ ինչ ոճով և սիստեմով գրած են պատմիչներն, ու ինքն կ'առաջադրէ բռնել միջին ճանապարհը, որուն կ'ուզենք հետևիլ նաև մենք։ Նա այսպէս կը գրէ.

«Վաղնջականի ազգին հռովմայեցւոց յաջողութիւնք և արկածք յականաւոր մատենագրաց արձանագրեցան. և ոչ պակասեցին արք գերահանարք ժամանակագրել զիրս Աւգոստեայ, մինչչև շողոմից զվերհրոտութիւն ի ներքս մուծեալ։ Վասն որոյ Տիբերի, Կալիգուլեայ, Կլաւդեայ և Ներոնի պատմութիւնք առ ինքնակալութեամն նոցա առ երկիւղի, և յետ մահու նոցա՝ զի դեռ ևս վառ և բորբոք էր ատելութիւն՝ ստայօղք աւանդեցան։ Այսր